ժամանակ, ուստա Սարգսի և նրա աշակերտների ձեռքով։ Այդ նորոգման ժամանակ ոչ մի էական փոփոխություն չի մտցվել նրա կառուցվածքի մեջ։

7. Գրատուն։ Հնում կոչվել է նաև նշխարատուն և նշխարախուց։ Մի առանձին շինություն է՝ վանքի շենքերի խմբի հյուսիս-արևելյան անկյունի վրա շինված։ Հատակագծում, երկրի չորս կողմերի ուղղությամբ ճիշտ դրված քառակուսի մի շենք է, որի ներ-



Նկ. 11. Ներքին ժամատան գմբեթավոր և մեծ ժամատան երկթեք ծածկերը հր կողմից։

սում, պատերի կենտրոնից բարձրացող որմնասյուների չորս կամարների վրա նստած է բուն գմբեթը. իր կառուցվածքով խիստ հետաքրքիր աշխարհիկ մի շենք է, և իր ոճի այժմ գոյություն ունեցող միակ նմուշը։

Գրատունը կառուցված է, ըստ արձանագրության, հայոց ՇԺԲ (512+551=1063) թվականին Լոռիի Դավիթ Անհողին թագավորի դուստր Հրանուշ թագուհու միջոցներով։ Կառուցման վերաբերող արձանագրության մեջ շենքը կոչվել է նշխարատուն (արձ. 179)։ Այդպես է կոչվել այն պատճառով, որ